Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ստեղծել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն:
2. Սահմանել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ 100000 դրամ, որը համապատասխանում է 100 հատ հասարակ բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 1000 դրամ անվանական արժեքով:
3. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին:
4. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարում կատարելու նպատակով «Հանրային հեռուստառադիոընկերություն» պետական հիմնարկին 2011 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 100000 դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ներքին բաժնետոմսերի և այլ մասնաբաժինների ձեռքբերում» հոդվածով):
5. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2011 թվականի բյուջեի ապահովումը մինչև 73245400 դրամի սահմաններում իրականացնել «2011 թվականի բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի միջոցների հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում _____ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հարապետության օրենքում 2010 թվականին կատարված փոփոխությունների համաձայն Հանրային հեռուստառադիոընկերությունը պետք է ունենա երկու հեռուստաալիք, որոնցից մեկը՝ ընդհանուր ուղղվածության, մյուսը՝ հոգևոր-մշակութային:

Առ այսօր Հանրային հեռուստառադիոընկերությունը հաղորդումների հեռարձակումն իրականացրել է երկու հեռուստաալիքներով, որոնցից մեկը ընդհանուր ուղղվածության /Հ1 ալիք/, իսկ մյուսը՝ մշակութային ուղղվածության /«Արարատ» մշակութային ալիք/:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի պահանջների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է Հանրային հեռուստառադիոընկերության մշակութային հեռուստաալիքը վերակազմավորել հոգևոր-մշակութային հեռուստաալիքի:

Հոգևոր-մշակութային հեռուստաալիքի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար նպատակահարմար է այդ ալիքի գործունեությունն իրականացնել առանձին իրավաբանական անձի կարգավիճակով, ինչը հնարավորություն կտա իրականացնել առանձին ծրագրային քաղաքականություն, ինքնուրույն որոշել արտադրվող և հեռարձակվող հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը, հաղորդաշանցում ապահովել հանրության բոլոր շերտերի հոգևոր և մշակութային պահանջմունքները բավարարող հաղորդումներ:

Հոգևոր-մշակութային հեռուստաալիքի գործունեությունն առանձին իրավաբանական անձի կարգավիճակով իրականացնելու հարցը բազմից բարձրացվել է մշակութային գործիչների և մտավորականության կողմից:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը առաջարկում է ստեղծել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն և այդ ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին:

Միաժամանակ նոր ստեղծված ընկերության 2011 թվականի գործունեությունն ապահովելու նպատակով «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի միջոցներից կհատկացվի 73245400 դրամ՝ վարչական անձնակազմի պահպանման, հաղորդումների արտադրության և հեռարձակման համար: